№ 149 Օգոստոսի 13 (25) 1881 Օգոստոսի 13 (25) № 149

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարատարածիք գրում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրարանչիւր բառին 2 կոպէկ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Խնդրում ենք մեր բաժանորդներին, որոնք «Մշակի» այս տարվայ բաժանորդագինը չեն վճարել, չուտով հասցնել մեզ իրանց վրա մնացած պարտքը. Չը վճարածների ցուցակը դեռ մեծ է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր հարուստները.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: «Новая Газета» լրագրի թղթակցութիւնը: ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Իտալիա: Նամակ Թիւրքիայից:— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ: — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ՖԵԼԻԵՏՕՆ:

ՄԵՐ ՀԱՐՈՒՍՏՆԵՐԸ

—

„Մշակի“ ներկայ համարում տպում ենք Ս. Պետերբուրգից ստացած մի լուր որ հարուստ հայերից մէկը կտակել է Նոր-Նախիջևանի բէալական դպրոցին մի շատ մեծ գումար: Մեր թղթակիցը հիացած է այդ տեսակ բարերարութենից:

Մենք չենք բաժանում մեր թղթակցի ուրախութիւնը և ահա ինչ պատճառով:

Նոր-Նախիջևանը մի հայոց գաղթական է եւրոպական Ռուսաստանում, հայերը այդտեղ ապրում են առանձնացած, եթէ կարելի է ասել կղզիացած իրանց համաբիւնների մեծամասնութենից: եթէ այսօր էէ, անպատճառ վաղը նրանք կոտորանան և անկարելի է որ չկոտորանան: Մի ժողովուրդ, որ չէ ապրում իր պատմական հողի վրա, շրջապատված չէ իր համարիւնների տարրով, այդ տեսակ ժողովուրդ կորած է ազգի մեծամասնութեան համար: Բոլորովին զարմանալի չի լինի, եթէ մի ժամանակ Նոր-Նախիջևան, Մօզդօկ, Ղզլար և սրանց պէս հայոց այլ գաղթականներ, որոնք ցրված են եւրոպական Ռուսաստանի երեսի վրա, կը լուծվեն ռուս տարրի մէջ: Դա կը լինի մի բնական երևոյթ: կարծել որ նրանք միշտ հայ կը մնան,—երեխայութիւն, միամտութիւն է: Մի ժողովուրդ կարող է պահպանել իր ազգութիւնը, իր մայրենի լեզուն միայն ապրելով իր մայրենի, պատմական հողի վրա, կամ խիտ կերպով բնակվելով մի երկրի մէջ, որտեղ բացի քաղաքներից նոյն ազգին պատկանած և բաղմաթիւ գիւղեր կան, որոնք կապված են քաղաքների հետ երկրի արդիւնաբերութեան, առեւտրական անխզելի կապերով, և այդ պատճառով կապված են և բարոյական, հասարակական հաստատ կապերով:

Մի մեծ գումար ընծայել մի որ և է Նոր-Նախիջևանի դպրոցի համար, ի հարկէ, մի մարդասիրական գործ է, ընդհանուր տեսակէտից նայած, բայց ազգասիրական գործ չէ կարող համարվել, որովհետև վաղուց արդէն մենք պէտք է ընտելանայինք այն մտքին, թէ կովկասեան սարերի այն կողմն ընկած միւեանց մէջ և Անդրկովկասի հետ ոչինչ կապ չունեցող հայոց կօլօնիաները պէտք է մի ժամանակ օտարանան: Լուսաւորչական կրօնին պատկանելը այդտեղ ոչինչ նշանակութիւն չունի: եթէ մի ժամանակ պատահէր որ Անդրկովկասի բոլոր հայերը փոխէին իրանց կրօնը, դարձեալ նրանք ապրելով պատմական Հայաստանի հողերի վրա, և խօսելով մայրենի լեզուով, հայ կը մնային: Իսկ Նոր-Նախիջևանի հայերը, թէկուզ միշտ լուսաւորչական դաւանութեան մէջ մնային, դարձեալ հանգամանքների ոյժին ենթարկվելով, պէտք է օտարանան, կորած լինելով հայրենի հողից, խիտ կերպով բնակվող համարիւններից և կղզիացած լինելով մի այլ տարրի մէջ:

Այդ պատճառով ազգային տեսակէտից մենք ոչինչ նշանակութիւն չենք տալիս հարուստ ստավրապօլցի պ. Պօպովի կատկին: Մեզ համար նա ոչինչ նշանակութիւն չունի. մեզ համար նրա ընծայած հարիւր հազար րուբլ աւելի քիչ նշանակութիւն ունի, քան թէ մի հինգ մանէթ որ ընծայվում է Ղարաքլիսի, Ալէքսանդրապօլի կամ Երևանի մի որ և է դպրոցին:

Այդտեղ յարմար է առհասարակ մի հայեացք գցել մեր հարուստների անպատասխանատու գործունէութեան վրա:

Մեր հարուստները կամ բոլորովին եսասէր են, անտարբեր են լինում դէպի ազգը, կամ եթէ յանկարծ վառվում են ազգասիրական զգացմունքով, այնքան անշնորհ կերպով են անում իրանց բարերարութիւնները, որ իրանց այդ բարերարութիւններով արժէքի ծառայութիւն են անում ազգին, աւելի ոչինչ:

Պատճառն այն է որ մեր բոլոր հարուստները ագէտ, գրեթէ անգրագէտ մարդիկ են, որոնք ոչ թէ միայն ոչինչ ուսում չունեն, բայց և հազիւ ստորագրել գիտեն իրանց ազգանունը: Նրանք իրանց միլիոններըը ձեռք են բերել այլ և այլ ճանապարհներով, միմիայն հային յատուկ ճարպիկութեան, բնական խելքի շնորհով:

Բայց մի և նոյն ժամանակ սաստիկ մեծ կարծիք ունեն իրանց մասին, սաստիկ ինքնահաւան են: Նրանք երևակայում են որ ամեն բան գիտեն, որովհետև կարողացան այլ և այլ ճանապարհներով հարստանալ: Այդ պատճառով, երբ յանկարծ այդ տեսակները վճռում են որ և է բարերարութիւն անել,—այլ ևս չեն դիմում ոչ ոքին, ոչ ոքից խորհուրդ չեն հարցնում, չեն կամենում խոստովանվել, որ թէև ոսկու քսակներ են, բայց տգէտ և անզարգացած մարդիկ են:

Այդպիսով ազգի համար ոչինչ չարած ժամանակ, նրանք աւելորդ և անպէտք են ազգին,—իսկ բարերարութիւն արած ժամանակ, այնքան անշնորհ և անտեղի բաներ են անում, լայեղ չանելով հասկացող մարդկանցից խորհուրդ հարցնելու, որ նրանց արածը դառնում է ՓՆասակար:

Մի որ և է հարուստ կարծում է մեծ բարերարութիւն է անում ազգին իր ընտրութեամբ երիտասարդներ ուղարկելով արտասահման: Ինչ կը դառնան նրա սանները,—դեռ կը տեսնենք: Խելքը փչածին պէս մեծ գումարներ է նուիրում ֆիզիկական մեքենաներ և փիլիսոփայական գրքեր ուղարկելու այնպիսի դպրոցներին, որտեղ ոչ այն մեքենաները կարող են գործ ածել, ոչ էլ այն գրքերը կարդալ... եւ բոլորը անգործադրելի է մնում և վերջը փչանում:

Մի Անանով հիմնում է մի օրիորդական դպրոց Թիֆլիսում, որտեղ ձրիաբար ընդունվում են ամենաաղքատ հայ աղջիկներ, որոնց սովորեցնում են այլ և այլ գիտութիւններ, բայց որոնց չեն սովորեցնում ոչ մի պիտանի արհեստ: եւ այդ տեսակ աղջիկները շպրտվում են կեանքի մէջ, առանց կարողանալու իրանց համար մի կտոր հաց հայթայթելու: Նոյն պարոնը ընծայեց իր դպրոցի գրադարանին այնպիսի գրքեր, որոնց թւում կարծեմ Լապլասի աստղաբաշխութիւնն կայ, որոնց գործածել և հասկանալ ոչ թէ միայն աշակերտուհիները չեն կարող, բայց նոյն իսկ դպրոցի տեսուչը և ուսեալ հոգաբարձուները: եւ դրա վրա նա դնում է ապարդիւն կերպով մեծ փողեր.... Պատճառն այն է, որ հարուստ հայ մարդը այնքան ինքնահաւանութիւն ունի, որ չէ կարող ոչ ոքից խորհուրդ հարցնել:

Երբ հիմնվում էր Անանեան դպրոցը, մենք լրագրի միջոցով բողոքեցինք դպրոցի ուղղութեան դէմ, առաջարկելով որ ի զուր չը սպանեն աղքատ խարբերդի և հալաբարցի հայ աղջիկներին, նրանցից բարի հիշեցեանները հինելով, այլ սովորեցնեն նրանց պիտանի արհեստներ: Մեր առաջարկութեանը պ. Անանով պատասխանեց մեր լրագրի մէջ արհամարհանքով: ի հարկէ հարուստ մարդը երևակայում է որ ամենքից խելօք է: Մենք էինք որ առաջարկում էինք, որ նա ուսում տայ աղջիկներին, որ նրանք կարողանան ապրել, եւ ոչ թէ նա, որ ուզում էր նրանց ուսում տալ, որ նրանք չկարողանան ապրել:

Ամենքը ախ ու վախ են քաշում, ոչ ոքի մէջ եռանդ չը կայ, ոչ ոք չունի մի որոշ նպատակ իր կեանքի մէջ: Իսկ եռանդի ներշնչողներն էլ նուիրում են իրանց վերջին ոյժերը քէֆ անելու, չդայլ կեանք վարելու, անպատակ փող վատնելու վրա:

***

Փորձենք ամեն դասակարգի և երկու սեռի անձանց դիմել:

—Մայրիկ, ինչպէս էք, հարցնում եմ մի աղքատ պառաւ կնոջ:

—Է՛հ, ինչպէս պէտք է լինենք. ջուրն եկել է ու մեզ տարել: Մարդս հիւանդ պառկած է, էլ պահել մեզ չէ կարող, մենք ենք նրան պահում: Որդուս ուսում տուեցի,— գնաց ու կորաւ: Աղջիկս մեր չկօլում ուսում աւարտեց,— ինչին է պէտք. ոչ արհեստ գիտէ, ոչ էլ ինձ օգնել կարող է տան անտեսութեան մէջ. կերակուր պատրաստել չը գիտէ, լուացք լուանալ լայեղ չէ անում ու չը գիտէ էլ.... քանդվի հիմակվայ ուսումը որ մեր աղջկերանցն են տալիս...

Ծանօթանում եմ միջին դասակարգի մի կնոջ հետ:

—Ա՛խ, պարոն, թէ իմանայիք, որքան ծանր է մեր դրութիւնը, սկսում է նա գանգատվել: Աղջիկ ունեմ, չը գիտեմ ինչ անեմ.... Անող չը կայ.... Հիմակվայ երիտասարդները էլ չեն նայում ոչ աղջկայ սիրունութեան վրա, ոչ էլ նրա ուսման վրա: Աղջիկը որ փող չունի,— էլ նրան ոչ ոք չէ ուզում. կարող է գնալ ջուրն ընկնել, կամ կուսանոց մտնել:

Ծանօթանում եմ մի վաճառականի հետ:

—Գործերը լաւ են գնում, պարոն Կիրակոսեան:

—Էլ մի ասէք.... Մոլորված ենք մնացել. առուտուր չը կայ, ամեն բան թանգ. ամբողջ օր այդպէս անգործ նստում ենք:

—Թքեցէք վաճառականութեան վրա, արուեստաւոր դարձէք:

—Ի՞նչպէս արուեստաւոր դառնամ, ոչ մի արհեստ չը գիտեմ:

Մի օր մի աղջիկ դիմում է ինձ, ինձանից խորհուրդ հարցնելու համար թէ ինչով պարապի, ինչ ասպարէզ ընտրի:

—Ուսում առել էք:

—Ինչպէս չէ, Ն. քաղաքի օրիորդաց դպրոցում ուսում եմ աւարտել,

—Ի՞նչ գիտէք:

—Ամեն բան գիտեմ:

—Օրինակ:

—Ռուսաց լեզու, հայոց լեզու, թւաբանութիւն, կրօն և պար:

—Աղախին դարձէք: Պատուաւոր ընտանիքում աղախին լինելը անպատիւ բան չէ:

ՖԵԼԻԵՏՕՆ

Իմ լուսթեան պատճառը:—Թաֆֆիի, Նիկոդոսեանի և իմ ճանապարհորդութիւնը:— ճանապարհորդութեան հետևանքները:— Ընդհանուր դժգոհութիւն:— Պառաւ կին:— Մի տիկին:— Մի վաճառական:— Մի օրիորդ: — Հարուստ կալուածատիրոջ հետ խօսակցութիւնս:— Գաւառական ինտելիգենցիա:— Պաշտօնեաներ և համալսարանական երիտասարդութիւն:— Աշխարհականներն ու հոգևորականները:— Քահանաների և վարդապետների գանգատները:— Մեր դպրոցները:— Մանկունի:

—

Վերջապէս ես կրկին Թիֆլիսումն եմ, վերջապէս կրկին տեսնում եմ այդ սիրելի քաղաքը և նրա սիրելի բնակիչներին:

Այդ խօսքը ձեզ, յարգելի ընթերցող, պարզ կերպով բացատրում է իմ մի քանի ամիսների լուսթեան պատճառը. ես բացակայ էի Թիֆլիսից, ես ճանապարհորդում էի: Եւ ինչի չը պէտք է ճանապարհորդէի, քանի որ խմբագրութեան բոլոր անդամները ճանապարհորդում են: Նիկոդոսեանը կ. Պօլսում նստած՝ զմայլվում է պօլսեցիների խելքից, ազգասիրութիւնից, անձնուրութիւնից, քաջասրտութիւնից, Թաֆֆին իր կողմից ոգևորվում է Ղարաբաղի բնութեան գեղեցկութիւններով և նիւթեր է հաւաքում իր բանաստեղծական գրուածքների համար, իսկ ես ֆելիետօններիս համար նիւթ չը գտնելով այդ միակերպ Թիֆլիսում, թողեցի մի քանի ամսով մեր երեսելի քաղաքը և ճանապարհ ընկայ քաղաքից քաղաք, գիւղից գիւղ, պտտեցի գրեթէ ամբողջ Անդրկովկասի մէջ, բայց ցաւելով պիտի խոստովանեմ զուր էր իմ ճանապարհորդութիւնս.... Ոչ մի տեղ նիւթ չը գտայ ֆելիետօններիս համար....

Այո, չատ և չատ սխալվեցի. ես դժգոհ էի Թիֆլիսից, բայց հաւատացնում եմ ձեզ, ընթերցող, որ մեր երկրի մնացած քաղաքներումն ու գիւղերում աւելի մխիթարութիւն չը գտայ:

Տխուր եմ վերադառնում Կովկասեան մայրաքաղաքը, ախտսալով կորած փողերս ու կորած ժամանակս:

***

Ուր որ գնացի,— ի հարկէ առանց ոչ ոքին ասելու թէ ես Ասիացի եմ,— ամեն տեղ տեսայ նոյն անմխիթար, տխուր երևոյթը. ամեն տեղ ընդհանուր ապատիա, անտարբերութիւն դէպի ամեն տեսակ հասարակական և ազգային հարցերը, մարդկանց միմեանց մէջ ինտրիգաներ, երկպառակութիւն, թշնամութիւն, բամբասանք, գանգատներ կեանքի դարդակութեան, նիւթական դժուարութիւնների վրա և այլն....

Մարդիկ այնքան դժգոհ են, այնքան կորցրել են իրանց գլուխը, այնքան մոլորվել են, որ պատրաստ են հաւատալ ամեն տեսակ չիմարութիւններին....

Եթէ մի լրագիր հանաքի համար ապի թէ չուտով աշխարհը պիտի վերջանայ, — մարդիկ պատրաստ են այդ բանին էլ հաւատալ.... Ամենքը ախ ու վախ են քաշում, ոչ ոքի մէջ եռանդ չը կայ, ոչ ոք չունի մի որոշ նպատակ իր կեանքի մէջ: Իսկ եռանդի ներշնչողներն էլ նուիրում են իրանց վերջին ոյժերը քէֆ անելու, չդայլ կեանք վարելու, անպատակ փող վատնելու վրա:

***

Փորձենք ամեն դասակարգի և երկու սեռի անձանց դիմել:

—Մայրիկ, ինչպէս էք, հարցնում եմ մի աղքատ պառաւ կնոջ:

—Է՛հ, ինչպէս պէտք է լինենք. ջուրն եկել է ու մեզ տարել: Մարդս հիւանդ պառկած է, էլ պահել մեզ չէ կարող, մենք ենք նրան պահում: Որդուս ուսում տուեցի,— գնաց ու կորաւ: Աղջիկս մեր չկօլում ուսում աւարտեց,— ինչին է պէտք. ոչ արհեստ գիտէ, ոչ էլ ինձ օգնել կարող է տան անտեսութեան մէջ. կերակուր պատրաստել չը գիտէ, լուացք լուանալ լայեղ չէ անում ու չը գիտէ էլ.... քանդվի հիմակվայ ուսումը որ մեր աղջկերանցն են տալիս...

Ծանօթանում եմ միջին դասակարգի մի կնոջ հետ:

—Ա՛խ, պարոն, թէ իմանայիք, որքան ծանր է մեր դրութիւնը, սկսում է նա գանգատվել: Աղջիկ ունեմ, չը գիտեմ ինչ անեմ.... Անող չը կայ.... Հիմակվայ երիտասարդները էլ չեն նայում ոչ աղջկայ սիրունութեան վրա, ոչ էլ նրա ուսման վրա: Աղջիկը որ փող չունի,— էլ նրան ոչ ոք չէ ուզում. կարող է գնալ ջուրն ընկնել, կամ կուսանոց մտնել:

Ծանօթանում եմ մի վաճառականի հետ:

—Գործերը լաւ են գնում, պարոն Կիրակոսեան:

—Էլ մի ասէք.... Մոլորված ենք մնացել. առուտուր չը կայ, ամեն բան թանգ. ամբողջ օր այդպէս անգործ նստում ենք:

—Թքեցէք վաճառականութեան վրա, արուեստաւոր դարձէք:

—Ի՞նչպէս արուեստաւոր դառնամ, ոչ մի արհեստ չը գիտեմ:

Մի օր մի աղջիկ դիմում է ինձ, ինձանից խորհուրդ հարցնելու համար թէ ինչով պարապի, ինչ ասպարէզ ընտրի:

—Ուսում առել էք:

—Ինչպէս չէ, Ն. քաղաքի օրիորդաց դպրոցում ուսում եմ աւարտել,

—Ի՞նչ գիտէք:

—Ամեն բան գիտեմ:

—Օրինակ:

—Ռուսաց լեզու, հայոց լեզու, թւաբանութիւն, կրօն և պար:

—Աղախին դարձէք: Պատուաւոր ընտանիքում աղախին լինելը անպատիւ բան չէ:

ԴԱՀԱՓԱՂՑ ԴԱՖՀԴՂ

„ՈՐԱՅ ԳԱԶԵՏԱ“ ԼՐԱԳՐԻ ԹՈՂԹԱԿԻՑ

ՅՈՒՎԱՆ

Փարիզից „Нова Газета“ լրագրին գրում են.

Ֆրանսիայի մամուլը մեծ ուշադրություն է դարձնում Ռուսաստանի ներքին դրության վրա։ Ռուսական լրագրերի ամեն մի նոր համարը ֆրանսիական լրագրերի մեջ առիթ է տալիս երկար ու բարակ խոսակցությունների։ Ռուսական լրագրերի մեջ ամենից շատ ուշադրության են արժանանում Մոսկվայի լրագրերը։ Ֆրանսիացիները ամենից շատ հետաքրքրվում են Մոսկվայի ազնվականության ժողովների վերաբերությամբ։ Ֆրանսիացիները ուզում են իմանալ, թե ինչ ասին ռուսական ազնվականները, ինչ խոսեցին նրանք, ինչ որոշեցին

«ՄՇԱԿ»-Ի ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 օգոստոսի։ Պետական ստացիկ բանկի 5% ոսկեայ ընդհատակեայ պարտքի 94 բ. 75½ ի., էմիսիոն 1884 բ. 94 բ. 25 ի., նոր 5% ոսկեայ փոխառութեան մարժ 231 բ. 75 ի., երկրորդ 5% ոսկեայ փոխառութեան մարժ 228 բ. 50 ի., ուլեկոզմի տարբեր փոխառութեան մարժ 91 բ. 25½ ի., երկրորդ 91 բ. 25 ի., երրորդ 91 բ. 37 ի., ոսկի 7 բ. 76½ ի.։ Ռուսաց 1 րուբլ Լօնդոնի վրայ 100 գծիր վրայ մարժ 25,81 ակնոյ, ռուսաց 100 Համբուրգի վրայ մարժ 205 մարկ։ Բորքանոյ ապրանքների գները Հոկտեմբեր—Դեկտեմբեր ամսուայ համար։

Ասում են, թէ Ռուսիոյ մէջ ամենայն տեղ, ուր տեղական ինքնավարութիւն կայ, ամենայն տեղ, ուր ազգաբնակչութիւնը ինքն է տնօրինում իր գործերը, ամենայն տեղ, ուր ազգաբնակչութիւնը ինքն է ընտրում իր պաշտօնեաներին, ամենայն տեղ, ուր ազգաբնակչութիւնը ինքն է հսկում իր պաշտօնեաների գործունէութեան վրայ, ամենայն տեղ, ուր ազգաբնակչութիւնը ինքն է հոգում իր կարիքների մասին, ամենայն տեղ, ուր ազգաբնակչութիւնը ինքն է ծախսում իր դրամը, ամենայն տեղ, ուր ազգաբնակչութիւնը ինքն է ուզում իր դպրոցները, ամենայն տեղ, ուր ազգաբնակչութիւնը ինքն է ուզում իր հիւանդանոցները, ամենայն տեղ, ուր ազգաբնակչութիւնը ինքն է ուզում իր ճանապարհները, ամենայն տեղ, ուր ազգաբնակչութիւնը ինքն է ուզում իր ոստիկանութիւնը, ամենայն տեղ, ուր ազգաբնակչութիւնը ինքն է ուզում իր դատաստանները, ամենայն տեղ, ուր ազգաբնակչութիւնը ինքն է ուզում իր զինուորները, ամենայն տեղ, ուր ազգաբնակչութիւնը ինքն է ուզում իր ամենայն բան, ամենայն տեղ, ուր ազգաբնակչութիւնը ինքն է ուզում

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՑԻ

Բոլոր բանաստեղծութիւնների ժողովածուն, տպած Մոսկվայում ամենաընտիր թղթի վերայ, հեղինակի վիմագիր պատկերով. գինը 50 կ. վաճառվում է ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ.

Նոյն տեղը վաճառվում են հետևեալ նոր հրատարակութիւնները.

1) Ռոբինզօն-Կռուզո՝ Ազանեան „ 60 կ.
2) Ահմէդի տոպրակը՝ Լալայեան „ 10 „
3) Ծաղկաքաղ արձ. և չափ. բանից՝ կոստանեան՝ — „ 25 „
4) Ուսուցիչ հայոց լեզուի՝ Նազարեան՝ — — — „ 40 „

Վերջին երկու դասագրքերից գումարով գնողները նշանաւոր զիջումն են ստանում:

144 Արծրունու գալերէա 144
ամենահէժան պահեստ
մեբելի և հայելիների:

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ
ОТДАЮТСЯ МАГАЗИНЫ
ВЪ НАЙМЫ

Въ галлереѣ имѣются: вода, газовое освѣщеніе и телеграфная станція.

10—10

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԷՈՒՄ

ՎԱՐՁՈՎ ՏՐՎՈՒՄ ԵՆ ՄԱԳԱԶԻՆՆԵՐ

գալլերէում կայ ջուր, գազի լուսաւորութիւն և հեռագրական կայարան:

10—10

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ ՔԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ. *մուրաբաներ, կօնֆեկտներ,* **ԿԱԿԱՕ**, *բրինձ, ամանեղէն, բօկալներ, թասեր, երես լուանալու ամաններ, չայնիկներ,* **ԲԱԺԱԿՆԵՐ**, *կերակրի ամաններ* (судки), *մատուցարաններ,* **ԿՈՂՊԷՔՆԵՐ**, **ԴԱՆԱԿՆԵՐ**, *գդալներ,* **ԳՐԻՁՆԵՐ**, *թուղթ, մատիտներ, տետրակներ,* **ՀՐԱՑԱՆՆԵՐ**, **ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ**, *ալբոմներ,* **ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ**, **ՀԱԳՈՒՍՏ**, *տրիկօ, պարսուսին, թաշկինակներ, երեսսրբիչներ, կլեօնկա, գուլբաններ,* **ԹԱՄԲԵՐ**, **ՊՕՐՏ-ՎԷՅՆ**, *խերես, կօնեակ և այլն:* **ԹՂԹ** *մեծ քանակութեամբ* **ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ** *համար* **ՊՈՒԴՐ** 44 *ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54 ր., և այլն: Այդ բոլորը կարելի է գտնել*

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:

Մի և նոյն տեղը էժան գնով. **ՇԼՐԲԵՏ** *մանգեզիա, խմոր* **ԾԱՌԱԻԻ** *դէմ,* **ԽԻՆԱՑԻ** *գինի ջերմի դէմ, կարբոլեան* **ՓՕՇԻ**, *հեղուկ և* **ՍԱՊՕՆ**, *բժշկական թուղթ վատերկլօզեաի համար, պարսկական փոշի:*

48—100

Հրատարակութեամբ Ներսիսի Սիմէօնեանց լոյս տեսաւ գերմանացի բժիշկ Շրէբերի „*Ֆնայկին բժշկական մարմնամարզութեան*“ *գրքույկի հայերէն թարգմանութիւնը 45 պատկերով, որոց միջոցաւ կարելի է կատարել առողջապահական բազմատեսակ մարմնամարզական կրթութիւններ ամեն տեղ, ամեն ժամանակ և առանց գործիքի: Նա յարմարացրած է ամեն հասակի արանց և կանանց համար: Գինն է 40 կօպ. Ծախվում է „կենտրօնական և կովկասեան գրավաճառանոցներում, նոյնպէս և պ. Մ. Վարդանեանցի մօտ.*“ Тройцкій пер. типографія Вартанянца, въ Тифлисъ.

ՀԷՆՑ ԻՍԿՈՅՆ ՍՏԱՑՎԵԼ *են մեծ քանակութեամբ հրացաններ,* **ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ**, *փամփուշտներ,* **ԹՂԹ** *առաջին տեսակի, բօկալներ և այլն:* **ՁՕԿ ԲՕՐ** (choke bore) **ՀՐԱՑԱՆՆԵՐ** George Dau-*ի գործարանից 120 ր., բէվօլվերներ բուլդօգ 11 տուբլուց, 700* **ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ** *5—40 տուբլ: Ծախվում է նոյնպէս պարուսին կիսագնով և ալբօմներ:* **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:**

12—12

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

Մ· ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ· ՆՈՐ ՏՊԱՐԱՆԸ

Տեղափոխեցաւ Գանձակայա փողոցից աւելի յարմարաւոր տեղ, այն է՝ **ՏՐՕՑԻՑԻ** *փողոցը* **№ 11**. *Փոստատան եաևի քուչան: Ընդունվում են ամեն լեզուով և ամեն տեսակ պատուէրներ ամենամատչելի գներով:*

Նոյն տպարանում ընդունվում են և պատուէրներ **ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ** *տպագրութեան համար փայտի և պղնձի վրա:*

„Ի Ե Ն Թ Ը“

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ԲԱՖՖԻԻ

Տպած մաքուր թղթի վրա, գիրքը բաղկանում 400 երեսից: Թիֆլիսում ծախվում է „Մշակի“ խմբագրատանը, „կենտրօնական գրավաճառանոցում“, „կովկասեան գրավաճառանոցում“ պ. Զաքարիա Գրիգորեանցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բօզաջեանցի, Հովուեանցի ծխախոտի մագազինները:

Գինն է **1 տուբլ 20 կօպ.:**

Վ[illegible] ուղարկվեցաւ իւր բաժանորդներին **ԲԱՖՖԻԻ „ԻԵՆԹԸ“** *անուանով վիպասանութիւնը: Նոր գնել ցանկացողներին խնդրում ենք դիմել* **ՇՈՒՇԻ**, *կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահտեսի-Յակոբեանցի տպարանը: ԲԱԳՈՒ՝ պ. Ալէքսանդր Թարխանեանցին,* **ԹԱՐՎԷԶ՝** *պ. Գրիգոր Բէջանեանցին.*

Հրատարակչի հասցէն. Шуша, въ конторѣ Арунянца АБѢЛУ АПРѢСЯНЦУ.

ՎԻՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ *(աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում կաթօլիկաց փողոցի անկիւնում Մի-ՔԱՅԷԼ ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում:*

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

55—150

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, *մազերը ամրացնող և նրանց* **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** *վերադարձնող: Գինը 2 ր. հիշը,* **ՓՈՍՏԱՅՈՎ** *ուղարկված 2 ր. 49 կօպ.* **ԱՆԳԼԻԱԿԱՆ** *խանութի մէջ*

Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՑԻ ԻԼՂ**, *մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը վրձին գլխաւոր գէմ,* **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** *և հոտաւէտ ջրեր և այլն:*

12—100

ПРИСЯЖНЫЙ ПОВѢРЕННЫЙ
А. С. ФРЕНКЕЛЬ

Переѣхалъ на Сололакскую улицу, въ домъ К. Меликова.

ՄԻ ՊԱՏՈՒԱԻՈՐ ԸՏԱՆԻՔ *ցանկանում է ընդունել իր մօտ օտարաքաղաքացի և Թիֆլիսեցի* **ԵՐԵԽԱՆԵՐԻՆ**, *որոնք սովորում են ուսուցիչարանների մէջ: կարելի է* **ԴԱՍԵՐԸ** *կրկնել տալ և առանց կրկնութեան:* **ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ** *շատ չափաւոր է: Հասցէն. Էնֆիաջեանցի գրավաճառանոցի մէջ:*

1—3 (4)

ՄՕԾԱԿՆԵՐ *կոտրելու փոշի: Ծախվում է* **ԾԱՏՈՒՐՕՎԻ** *լամպի մագազինում:*

ԵՐԴՎԵԱԼ ՀԱԻԱՏԱՐՄԱՏԱՐ ՍԵՐԳԷՅ ՎԱՍԻԼԵՎԻՉ ՉԵՄՏՍՕՎ *տեղափոխեց իր բնակարանը Արսենալնայա փողոց „Կրուժօկի“ շինութեան եաևը, գարբուհօվի տանը: 2—5 (1)*

Նուխու ազգային-հոգևոր դպրոցին հարկաւոր է մի ուսուցիչ ռուսաց լեզուի և թուաբանութեան՝ 600 րուբ. ռոճիկով: այլ և հարկաւոր են ուսուցիչներ Ղարաբաղի և Նուխու գիւղական դպրոցների համար: Յանկացողներին խնդրում եմ շուտով դիմել ինձ՝ Շուշի:

Թեմ. վերատեսուչ Յ. Տէր-Գրիգորեանց

5—5

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ *համար* **ՀԱԻԱՏԱՐՄԱՏԱՐ Պ. Մ. ԼԵԲԵԴԻՆՍԿԻ** *տեղափոխեց իր բնակարանը Օրլովսկու տանը Ինստիտուտի մօտ:*

5—5

ԹՂԹ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱՆԱՉՈՂՆԵՐԸ *պէտք է գնեն* **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** *մէջ թէյ լաւ տեսակի ֆունտը 1 ր. 20 կ. և 2 ր. և համեմատեն առաջինը 1 ր. 60 կ. հետ և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ* **ԹԻՖԼԻՍՈՒՄ**, *որպէս մի իսկական անգլիական խանութի մէջ ծախվող ամեն տեսակ թէյի համեմատական* **ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ:** *Բացի այդ անգլիական խանութը կշռում է* **ՄԱՔՈՒՐ ԹէյՅ** *առանց* **ԹՂԹԻ և ԱՐՃԱՃԻ:**

33—100

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ *անունով* **ՄԵՐ ԵՐՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՑ** *դասագիրքը լոյս տեսաւ և ծախվում է Կովկասեան ու Կենտրօնական գրավաճառանոցներում:*

Գինն է 40 կօպէկ:

Իսկ ով ցանկանում է հետը 35 կոպէկով ձեռք բերել, գինը **ԿԱՆԽԻԿ** *վճարելով և ճանապարհածախսը իր վրա առնելով՝*

Թող դիմէ մեզ հետեւեալ հասցէով.

„Въ Тифлисъ.— На Авлабарѣ. Ивану Петровичу Назарьянцъ.“

ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ 4 ր., *ծրծողներ 1 ր., ծալվող աթոռներ 1 ր. 50 կ., ՓԱՑՏ-ԱԹՈՌ 4 ր.,* **ԲԱԶԿԱԹՈՌ-ՄԱՀՃԱԿԱԼ** *10 րուբլ և աւելի, թէյի բաժակներ 25 և 30 կ., մի ման քորոցներ 50 կ., պաստելա ծխողների համար 60 կ. ֆունտը, անգլիական վաննաներ և այլն ծախվում են* **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:**

10,000 զոյգ գուլբաններ 25 կ.—ից զոյգը, 10,000 զոյգ կանանց **ԳՈՒԼԲԱՆՆԵՐ** *30 կ.—1 ր., 7,000 մատուցարաններ 5 կ.—5 ր., 1,000* **ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ** *5 ր.—35 ր., 400 արշին բօմազէյ 1 ր.—1 ր. 30 կ., պաուսինա 40 կ.—1 ր., 300 հատ բէվօլվեր 4 ր.—35 ր., 700 ալբօմ կիսագնով, 10,000 ֆունտ թէյ թէյամանով 1 ր. 65 կ: եր-կաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի համար: ծախվում են* **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** *մէջ:*

30—100

Дозволено цензурою, Тифлисъ 12 Августа 1881 года.

ТипографіГлавя наго Управленія Намѣстника Кавказскаго.